ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Արմավիրի մարզի << Սարդարապատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ՆՃՊ և անվտանգության կենսագործունեության ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ նշված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1)
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)
3. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/:
4. Անձը հաստատող փաստաթուղթ
5. Ինքնակենսագրություն (ձև 5)
6. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
7. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
9. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ;

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն անբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթն անցկացվելու է ՀՀ Արմավիրի մարզի <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2024թ. մարտի 1 - ին՝ ժամը 14 ^{00}- ին:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ , գյուղ Սարդարապատ,Աբովյան 65 :

Տեղեկությունների համար զանգահարել 094 605555 հեռախոսահամարով:

Տնօրեն Կ. Սմբատյան